

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Բաբլոյանի և Կարեն Ավագյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. Առաջարկում ենք 1-ին հոդվածը հանել, քանի որ, համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի երկրորդ պարբերության՝ «Այն պայմանների թվարկման ժամանակ, երբ բոլոր թվարկված պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, չի կարող կիրառվել «և» կամ «ու» շաղկապը, կամ

դրանք չեն կարող բաժանվել ստորակետով կամ կետադրական այլ նշանով: Այս դեպքում պետք է կիրառվի «կամ» շաղկապը: Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար` թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է»: Այսինքն` հողվածով առաջարկվող փոփոխության ընդունման դեպքում կստացվի, որ մարդուն պարտադիր պետք է միաժամանակ փոխապատվաստեն և՛ օրգաններ, և՛ հյուսվածքներ, ինչն ընդունելի չէ:

## 2. 3-րդ հողվածի`

1) վերջին պարբերությունը «գբադվող» բառից հետո լրացնել «լիցենզավորված» բառով.

2) վերջին պարբերության կապակցությամբ անհրաժեշտ է օրենքում սահմանել «օրգաններ և հյուսվածքներ վերցնել, մշակել» հասկացությունը:

## 3. 4-րդ հողվածում`

1) նոր խմբագրությամբ առաջարկվող 7-րդ հողվածի երկրորդ պարբերությունում անհրաժեշտ է`

ա. «Նրա» բառը փոխարինել «Օրգանների և հյուսվածքների դոնորների և ռեցիպիենտի ռեեստրում նրա, որպես դիակային դոնոր հանդես գալու» բառերով,

բ. «հարազատների» բառից հետո պարբերությունը լրացնել «(ազգականների)» բառով, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և այլ իրավական ակտերում կիրառվում է այդ տերմինը.

2) վեցերորդ պարբերությունը «Անձի» բառից հետո լրացնել «կենդանի կամ դիակային դոնոր հանդես գալու» բառերով:

4. Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները` առաջարկում ենք`

1) նախագծի վերնագրում «փոփոխություն» բառը փոխարինել «փոփոխություններ», իսկ «մարդու» բառը` «մարդուն» բառերով.

2) 3-րդ հողվածում «2<sup>1</sup>» թիվը փոխարինել «2.1» թվով.

3) 5-րդ հողվածում «ենթակետերով» բառը փոխարինել «կետերով» բառով:

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Միաժամանակ, նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, առաջարկում ենք՝

1) 1-ին հոդվածում «7<sup>5</sup>» թիվը փոխարինել «7.5» թվով.

2) 2-րդ հոդվածում «հրապարակմանը» բառը փոխարինել «հրապարակման օրվան» բառերով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Թաթուլ Հակոբյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-385-25.11.2008-ԱՌ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«Մարդու օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին

*Հոդված 1.* «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի (2002 թվականի ապրիլի 16, ՀՕ-324) (այսուհետ՝  
օրենք) վերնագրում եւ ամբողջ տեքստում «եւ (կամ)» բառերը փոխարինել «եւ» բառով:

*Հոդված 2.* Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

« *Հոդված 2.* Փոխպատվաստման պայմանները

Կենդանի դոնորից կամ դիակից փոխպատվաստում կարող է կատարվել միայն այն դեպքում,  
երբ մյուս բժշկական միջոցառումները չեն կարող երաշխավորել հիվանդի կյանքի փրկությունը  
եւ առողջության վերականգնումը:

Արգելվում է կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանների եւ հյուսվածքների  
առուվաճառքը»:

*Հոդված 3.* Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 2<sup>1</sup> հոդվածով՝

«*Հոդված 2<sup>1</sup>.* Օրգանների եւ հյուսվածքների դոնորների եւ ռեցիպիենտների ռեեստր

Օրգանների եւ հյուսվածքների դոնորների եւ ռեցիպիենտների ռեեստրը ապահովում է սույն  
ուրրտում տեղեկատվական միասնական համակարգը, որտեղ գրանցվում են հետեւյալ  
տեղեկությունները.

ա) օրգանների եւ հյուսվածքների փոխապատվաստման դեպքերը,

բ) օրգանների եւ հյուսվածքների դոնորների եւ ռեցիպիենտների վերաբերյալ տեղեկատվությունը,

գ) տեղեկատվություն անձանց վերաբերյալ, որոնք կենդանության օրոք հրաժարվել են հանդես գալ որպէս դոնոր:

Օրգանների եւ հյուսվածքների դոնորների եւ ռեցիպիենտների ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման եւ օգտագործման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Օրգանների եւ հյուսվածքների դոնորների եւ ռեցիպիենտների ռեեստրում գրանցված տեղեկությունները հանդիսանում են բժշկական գաղտնիք եւ կարող են տրամադրվել փոխապատվաստման օրգանների եւ հյուսվածքների վերցմամբ, մշակմամբ եւ փոխապատվաստմամբ զբաղվող բժշկական հաստատություններին եւ սույն օրենքով նախատեսված դեպքերում»:

*Հոդված 4.* Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

*«Հոդված 7.* Դիակային դոնորից օրգաններ եւ հյուսվածքներ վերցնելու համաձայնության նախապայմանը

Փոխապատվաստման նպատակով դիակից օրգաններ եւ հյուսվածքներ չեն կարող վերցվել միայն այն դեպքում, երբ տվյալ անձն իր կենդանության օրոք, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, հրաժարվել է մահից հետո հանդես գալ օրգանների եւ հյուսվածքների դոնոր:

Նրա որոշման բացակայության դեպքում փոխապատվաստման նպատակով դիակից օրգաններ եւ հյուսվածքներ կարող են վերցվել նրա հարազատների համաձայնությամբ՝ հետեւյալ առաջնահերթությամբ.

1.ամուսին,

2.չափահաս երեխա,

3.ծնողներից մեկը,

4. հարազատ եղբայր կամ քույր,

5. հայրական կամ մայրական կողմի պապը կամ տատը:

Միեւնույն առաջնահերթությամբ մի քանի հարազատների առկայության դեպքում բավարար է նրանցից մեկի տեղեկացվածությունը եւ համաձայնությունը:

Յուրաքանչյուր ոչ մահից հետո դոնոր հանդես գալու իր գրավոր անհամաձայնությունը լիազոր մարմնի կողմից հաստատված կարգով ներկայացնում է իր ընտանեկան բժշկին կամ տեղամասային թերապեւտին, որը գրանցվում է նրա բժշկական փաստաթղթերում:

Անձի որոշման վերաբերյալ այդ տեղեկությունը ընտանեկան բժիշկը կամ տեղամասային թերապեւտը լիազոր մարմնի կողմից հաստատված կարգով փոխանցում է օրգանների եւ հյուսվածքների դոնորների եւ ռեցիպիենտների ռեեստրին:

Փոխապատվաստման նպատակով մինչեւ **18** տարեկան երեխաների կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի դիակից օրգաններ եւ հյուսվածքներ կարող են վերցվել միայն նրա ծնողի կամ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ:

Լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով բնակչության շրջանում իրականացվում է տեղեկատվության տրամադրում` օրգանների եւ հյուսվածքների փոխապատվաստման նշանակության, դոնորության նախապայմանների եւ փոխապատվաստմանն առնչվող այլ հարցերի շուրջ»:

*Հոդված 5.* Օրենքի **11**-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «ե» եւ «զ» ենթակետերով`

ե) պատանդներ

զ) լրացել է քաղաքացու **65** տարին»:

*Հոդված 6.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող իննսուներորդ օրվանից:

Նախագիծ  
Պ-385<sup>1</sup>-25.11.2008-ԱՌ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

*Հոդված 1.* «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (**1996** թվականի ապրիլի **30**, ՀՕ-55) (այսուհետ` օրենք) **15**-րդ հոդվածը լրացնել **7<sup>5</sup>** մասով` հետեւյալ բովանդակությամբ.

«**7<sup>5</sup>** . Արգելվում է մարդու օրգանների եւ հյուսվածքների առետրային (կոմերցիոն) գովազդը»:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին » եւ «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունման անհրաժեշտության մասին

Մարդուն օրգանների եւ հյուսվածքների փոխպատվաստման պատմական հիմքերը դրվել են Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո: **1960** թվականից հետո օրգանների եւ հյուսվածքների փոխպատվաստումը բավականին տարածում գտավ՝ փրկելով հազարավոր մարդկանց կյանքն ամբողջ աշխարհում: Փոխպատվաստման բարդությունների բուժման եւ վիրաբուժական տեխնիկայի զարգացման հետ կապված օրգանների փոխպատվաստման ոլորտում հսկայական առաջընթաց է նկատվել, որի արդյունքում աճել է օրգանների փոխպատվաստումների թիվը: Այսպես օրինակ, անցած տասը տարիների ընթացքում երիկամների փոխպատվաստումների թիվը կրկնապատկվել է:

Սակայն, օրգանների փոխպատվաստումների էթիկական ասպեկտները դեռեւս արդիական են մնում: Այդ ինդիկսներից կարեւորագույնը դոնորների իրավունքների պաշտպանությունն է, որտեղ քննարկման ենթակա է դիակային դոնորից օրգաններ եւ հյուսվածքներ վերցնելու համաձայնության նախապայմանը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ օրգանների փոխպատվաստումը կազմակերպված է դոնորների համաձայնագրի տրամադրման երկու համակարգերի շուրջ.

§ *Մասնակցային համակարգ* - Այս համակարգի կազմակերպման դեպքում, եթե անձը ցանկանում է իր մահից հետո հանդես գալ որպես դոնոր, պետք է այդ մասին իր կենդանության օրոք սահմանված կարգով տա համաձայնություն /ստորագրելով Դոնորի քարտը կամ վարորդական իրավունքը, կամ էլ այդ մասին տեղյակ պահելով դոնորների ազգային ռեգիստրին/: Բացի այդ համաձայնագրից, փոխպատվաստման նպատակով դիակից օրգաններ եւ հյուսվածքներ կարող են վերցվել մահացած անձի հարազատների համաձայնության դեպքում: Դոնորների համաձայնության տրամադրման նման համակարգեր գործում են Կանադայում, Գերմանիայում, Թուրքիայում:

§ *Ոչ մասնակցային համակարգ* - Այս համակարգի կազմակերպման դեպքում, եթե անձը իր կենդանության օրոք չի հրաժարվել իր մահից հետո հանդես գալ որպես դոնոր եւ այդ մասին չի տեղեկացրել համապատասխան մարմիններին /դոնորների ազգային ռեգիստր, բժշկական անձնակազմ, հարազատներ/, ապա ենթադրվում է, որ նա համաձայն է հանդես գալ որպես դոնոր: Այս համակարգը գործում է Ավստրիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Ֆինլանդիայում, Պորտուգալիայում, Նորվեգիայում եւ մի շարք այլ երկրներում:

§ Միջազգային փորձը վկայում է, որ այսօր առավել արդյունավետ համակարգը դա ոչ մասնակցային համակարգն է, որը թույլ է տալիս բարձրացնել իրականացվող փոխպատվաստումների քանակը՝ նպաստելով բնակչության առողջության վերականգնմանը, կյանքի որակի բարելավմանը եւ մահացության նվազեցմանը:

Հայաստանի Հանրապետությունում, ըստ «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխ-

պատվաստելու մասին» ՀՀ օրենքի, գործում է մահից հետո դոնոր հանդիսանալու նպատակով անձից համաձայնագիր վերցնելու մասնակցային համակարգը: Հայաստանի փորձը ցույց է տալիս, որ նման համակարգի կազմակերպումը արդյունավետ չի գործում եւ չի նպաստում դոնորների թվի աճին: Բացի այդ, օրենքում բաց է թողնվել երեխաների կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձանց դիակից փոխպատվաստման նպատակով օրգաններ կամ հյուսվածքներ վերցնելու կանոնակարգումը:

Այս նախագծով առաջարկվում է փոփոխություն կատարել գործող օրենքում եւ սահմանել դոնորների համաձայնագրի տրամադրման միջանկյալ համակարգը՝ հնարավորություն տալով մարդկանց իրենց որոշումը հայտնել կենդանության օրոք եւ գրավոր հրաժարվել մահից հետո որպես դոնոր հանդես գալուց: Այս դեպքում հնարավորություն է ստեղծվում անձի որոշման բացակայության ժամանակ դիմելու նրա հարազատներին եւ դրանից հետո միայն իրականացնել օրգանների եւ հյուսվածքների վերցնելը:

Օրենքի սույն փոփոխությունը մշակվել է՝ հաշվի առնելով, որ.

- § Մեկ դիակից վերցված օրգաններով կարելի է միաժամանակ մի քանի կյանք փրկել,
- § Առավել դյուրին է հայտնաբերել այն մարդկանց, որոնք չեն ուզում հանդես գալ որպես դոնորներ, քան նրանց՝ որոնք կցանկանան,
- § Արտասահմանյան երկրներում իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ շատերն են համաձայն մահից հետո դոնոր հանդես գալ, սակայն այդ մասին չեն տեղեկացնում իրենց հարազատներին կամ համապատասխան մարմիններին,
- § Հնարավորություն կառաջանա նոր կյանքեր փրկել՝ օգտագործելով նորագույն փոխպատվաստման տեխնոլոգիաներ եւ մեթոդներ:

Անհրաժեշտ է ընդունել, որ այսօր գործող օրենքի նշված դրույթների հետեւանքով յուրաքանչյուր օրգան կորցնելով կորցնում ենք մեկ կյանք:

Նախագծով առաջարկվում է նաեւ ներդնել սույն ոլորտում տեղեկատվական միասնական համակարգը ապահովող Օրգանների դոնորների եւ ռեցիպիենտների ռեեստր, որտեղ կգրանցվեն տեղեկություններ փոխպատվաստված դեպքերի, դոնորությունից հրաժարված անձանց եւ ռեցիպիենտների վերաբերյալ: Այս համակարգը հնարավորություն կտա առավել արդյունավետ կառավարել տեղեկությունների հոսքը՝ նպաստելով փոխպատվաստումների իրականացման վերաբերյալ որոշումների արագ ընդունմանը եւ արձագանքմանը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքում լրացումը պայմանավորված է նրանով, որ այդ օրենքով է կանոնակարգվում ցանկացած գործունեություն, այդ թվում՝ օրգանների եւ հյուսվածքների կոմերցիոն գովազդի բացառումը: